



ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (LSREP) ՀԱՄԱԿԱՐԳԻՑ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ**

2020թ.

Նկարագրություն

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների (LSREP) համակարգը (այսուհետ՝ Համակարգ) ձևավորվում է գերատեսչությունների կողմից ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով հաստատված ձևերին համապատասխան, ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ ներկայացվող հաշվետվությունների ներմուծմամբ:

Հաշվետվությունների ներկայացման ժամկետները նույնպես կարգավորվում են վերոնշյալ հրամանով, համաձայն որի՝

1) ամսական պարբերականությամբ ներկայացվող հաշվետվությունների համար՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 27-ը, իսկ արտաբյուջետային եկամուտների գոյացման և տնօրինման մասին հաշվետվությունների համար՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 12-ը,

2) եռամսյակային պարբերականությամբ ներկայացվող հաշվետվությունների համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը,

3) տարեկան պարբերականությամբ ներկայացվող հաշվետվությունների համար՝ մինչև հաշվետու ֆինանսական տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

Տվյալների ֆիլտրման, խմբավորման, հանրագումարների ավելացման, սյուների ընտրման գործիքները թույլ են տալիս համակարգից ստանալ և արտահանել ցանկացած տվյալ, ցանկացած տեսքով:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քայլ 1

Մուտք գործել Համակարգ նախապես նշելով անհրաժեշտ տարեթիվը, այնուհետև տվյալ տարեթվի հաշվետու ժամնակահատվածը (ամիս, եռամսյակ, տարի):

Քայլ 2

Ակտիվացնել Համակարգի հիմնական պատուհանի վերևի տողում գտնվող «Հաշվետվություններ» պատուհանը, այնուհետև ելնելով անհրաժեշտությունից բացել «Պետական բյուջե», «Արտաբյուջե», «Հաշվեկշիռ», «Վարկ/դրամաշնորհ», «Արդյունքային ցուցանիշներ» բաժիններից որևէ մեկը:

Քայլ 3

Ընտրել անհրաժեշտ

- Բաժին, խումբ, դաս, ծրագիր բաժնից անհրաժեշտ դասակարգում(ներ)ը
- Նախարարություն(ներ)ը, պատասխանատու(ներ)ը
- Հոդված(ներ)ը
- ԾԲ ծրագիր, միջոցառում բաժնից ընտրել անհրաժեշտ դասակարգում(ներ)ը

Վերոնշյալ դաշտերում նշում չկատարելու դեպքում կստանանք ամբողջական ցանկը:

Օրինակ. Նախարարություն դաշտում նշում չկատարելով կստանանք բոլոր գերատեսչությունների ցանկը, իսկ 105034 նշելով կստանանք միայն ՀՀ հաշվեքննիչ պալատի հաշվետվությունը:

Քայլ 4

Հաշվետվություն կարող ենք արտահանել ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման առանձին ծրագրերի և միջոցառումների, գերատեսչական դասակարգման առանձին մարմինների, գործառական և տնտեսագիտական դասակարգման առանձին տարրերի:

Դասակարգման ընտրությունը և դասավորվածության հերթականությունը կատարվում է Համակարգի «Դաշտեր» պատուհանի LDAGSCPMR տառերի ընտրության և դասավորվածության միջոցով: Ստորև ներկայացված է տառերի համապատասխան բացատրությունները:

- L - Պատասխանատու գերատեսչություն
- D - ԾԲ ծրագիր
- A – Միջոցառում
- G – Բաժին
- S – Խումբ
- C – Դաս
- P – Ծրագիր
- M – Ծրագրերը իրականացնող գերատեսչություն
- R – Հոդված

Օրինակ. Տնտեսագիտական դասակարգմամբ, որևէ գերատեսչության հաշվետվություն ստանալու համար անհրաժեշտ է ջնջել բոլոր տառերը, թողնելով միայն MR տառերը:

Քայլ 5

Հաշվետվության ֆինասական ցուցանիշների ընտրության համար անհրաժեշտ է Համակարգի «Սյուն» պատուհանից ակտիվացնել անհրաժեշտ կետերը (1-28): Յուրաքանչյուր կետերի անվանումները կարդալու համար անհրաժեշտ է կուրսորը պահել տվյալ կետի վրա և անվանումը կհայտնվի Համակարգի հիմնական պատուհանի ստորին հատվածում:

Օրինակ. Նշելով 12-րդ կետը, հաշվետվությամբ կստանանք փաստացի ծախսի ցուցանիշը:

Քայլ 6

Տեղեկատվությունը ամբողջական լինելու նպատակով անհրաժեշտ է ակտիվացնել <<Տեսակ>> պատուհանի պետական բյուջե, արտաբյուջե և վարկ/դրամաշնորհ բաժինները:

Քայլ 7

Անհրաժեշտ բոլոր պարամետրերը նշելուց հետո անհրաժեշտ է սեղմել <<Excel>> պատուհանի վրա և հիշել ֆայլը:

Հաշվեքննիչ պալատի կողմից առավել հաճախ օգտագործվող հաշվետվությունների ցանկ

Հ/հ	Հաշվետվության անվանում	Ֆինանսական ցուցանիշներ
1	Բյուջետային ծախսերի կատարման մասին (ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման առանձին ծրագրերի և միջոցառումների, գերատեսչական դասակարգման առանձին մարմինների, գործառական և տնտեսագիտական դասակարգման առանձին տարրերի)	Օրենքով հաստատված պլան, ճշտված պլան, ֆինանսավորում, դրամարկղային ծախս, փաստացի ծախս

2	Դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին (ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման առանձին ծրագրերի և միջոցառումների, գերատեսչական դասակարգման առանձին մարմինների, գործառական և տնտեսագիտական դասակարգման առանձին տարրերի)	Դեբիտորական և կրեդիտորական պարտքեր (տարեսկիզբ, տարեվերջ)
3	Վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման մասին (ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման առանձին ծրագրերի և միջոցառումների, գերատեսչական դասակարգման առանձին մարմինների, գործառական և տնտեսագիտական դասակարգման առանձին տարրերի)	Հաստատված պլան, ճշտված պլան, ֆինանսավորում, համաֆինանսավորում, դրամարկղային ծախս, փաստացի ծախս
4	Արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին (ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման առանձին ծրագրերի և միջոցառումների, գերատեսչական դասակարգման առանձին մարմինների, գործառական և տնտեսագիտական դասակարգման առանձին տարրերի)	Տարեսկզբին հաստատված նախահաշիվ, ճշտված նախահաշիվ, փաստացի
5	Արդյունքային ցուցանիշների կատարման մասին (ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման առանձին ծրագրերի և միջոցառումների, գերատեսչական դասակարգման առանձին մարմինների, գործառական և տնտեսագիտական դասակարգման առանձին տարրերի)	Պլանային ցուցանիշ, փաստացի ցուցանիշ, տարբերության պատճառը